

ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԵՔՍՔԵՐ

Յողբերգութենէ Հենրիկոսի Ը արքայի
Օրհաս մահուն Կատարինեայ արձակելոյ կնոջ Թագաւորին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մի յառաջնոց անտի որք զհրաշագանն տեսարան ասացին գոլ զվսաւոր արժանիք Հենրիկոսի Ը արքայի Ոյբերգութեան, եկաց ճոնսն. սակայն 'ի միտէ, առ և նա՝ եթէ զիարդ ցան անուշակ և աղէտք այնքան պնդութեամբ տարեալք 'ի Կատարինեայ, ետուն քերթողին՝ յորինել տեսիլս, որք 'ի համար գրին գեղեցկագունիցն՝ յորս պանծայ ողբերգական բանաստեղծութիւն: Հանճար Շէքսբիրի, ասէ նա, զարթնու կամ՝ նուազէ 'ի մտանել անդ 'ի թատրն և յելանել Կատարինեայ: Եւ արդարեւ գծուարին. ինձ թուի յանդիման առնել տեսիլ առաւել պարզ, ազդոյ և ճշմարիտ՝ քան զտառապեալ գլխոյին հասելոյ 'ի դուրս մահու: Սոյն այս, և չխիթամք ինչ 'ի խաբս ըմբռնիլ, շքնչեալ է և Մանցոնեայ զելս վախճանի, ոչ ինչ ընդհատ վաեմախոհ և գորովագութ, արձակելոյ կնոջն էրմէնկարտայ (Ատէքի. Հ. Դ. — Տ. Ա.):

ԳԱՐԴԱՆՈՅ Իտալացի.

ՀԱՆԴԷՍ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Բ

Ի ԳԵՐՊՈԼԴՈՆ

Մտանէ Կատարինէ հիշանդ, յեցեալ 'ի Գռիփիք և 'ի Համբերիկ,

Գռիփիք

Զիարդ կաս, աիկին ազնիւ:

Կատարիմէ

Գռիփիթ, հիւանդ առ 'ի մահ.

Խորե ոստը ծանրաբեռինք ծունգը իմ յերկիր խոնարհին,
Փափաղելով թողուլ ըզբեռն իւրեանց: Մատո ինձ աթոռ...
Բարի է... ինձ թըւի այժմիկ փոքր ինչ բարւոք կալ:
Չասացեր ինձ, Գռիփիթ, մինչ ածէիր այսըր զիս
Եթէ մեծն այն որդին փառաց մեռաւ՝ վուլէյ կարդինալ:

Գռիփիթ

Այո, մի տիկին, ասացի քեզ, սակայն դու
Յաղէտ ցաւոցըդ պաշարեալ ունկն ինչ ինձ ոչ մատուցեր:

Կատարիմէ

Աղաչեմ ըզբեզ, Գռիփիթ, զիանդ մեռաւ, պատմեալ ինձ.
Եթէ բարւոք՝ ապա կանխեաց տալ օրինակ ինձ բարի:

Գռիփիթ

Արդարեւ բարի, տիկին, որպէս համբաւն ընթացաւ:
Ձի այն ինչ իշխանն ահեղ նորթերը լանտայ զնա կալաւ.
Անդ ի յեօրք, և ածէր պատասխանի տալ անձին,
Որպէս այր ամբաստանեալ ի մեծեղեռն ինչ յանցանս,
Յանկարծոյն խօթացաւ նա, և այնքան ախտըն խրատեաց՝
Մինչև ոչ իսկ ատիկեւ նըստել յիւրումըն ջորւոյ:

Կատարիմէ

Եղևկ հիքացելումն:

Գռիփիթ

Ընդ ճանապարհ արահետ

Ի Լէյսդեր ուր ուրեմն եհաս, և անդ ի վանքն օթեցաւ,
Ուր առաջնորդըն մեծարոյ ուխտիւ իւրով համօրէն
Ընկալաւ ըզնա պատուով. առ որ ասաց նա յայնժամ.
« Աբրայ հայր, ալեոր դք ալէկոծեալ ի կենցաղոյս՝
« Եկն ի միջի աստ ձերում թողուլ զոսկերսքն տառապեալս.
« Ողորմեալ նըմա գըթով տուք սակաւիկ մի հողոյ, —
Անկաւ այսպէս յանկողին, և ախտն երթայր զայրանայր,
Եւ յետ երկից գիշերաց զոգ զութերորդըն ժամաւ,
Չորմէ ինքնին կանխասաց լեալ էր լինել օր իւր յետին,
Ձըղմամբ՝ ապաշաւիք և ի խոկմունս անդադարս

Յարտասուս հարեալ և յողբա՝ անդրէն դարձոյց առ աշխարհ
Ջնորայն փառս, յերկինս՝ զհոգին, և փոխեցաւ 'ի հանգիստ:

Կատարինէ

Կացցէ 'ի հանգըստեան. թեթեասցին մեղք նորա:
Այլ անսա ինձ արդ, Գռիփիթ, զի քեզ ըզմիտս հոլանեալ
Ասացից զոր խորհիմբս, ներելով գրթութեամբ: —
Գըտաւ նա այր փառամոլ անյազելի տենչանօք,
Որ կամէր ընդ իշխանս հարթ հաւասար ընթանալ.
Այր որ մանգաւ վարակեցոյց ըզպետութիւնն համբռէն.
Սիմոնեան ախտըն խաղալիկ ինչ թըւէր յայլոս նորա.
Յօրէնս ունէր զիւր լոկ կարծիս. 'ի սըտեւոյ ոչ խորշէր,
Երկխօս 'ի բանս իւրում՝ որպէս և էրն 'ի խորհուրդս.
Ի դըրժեղն և եթ առ այլս՝ ըզգըթութիւն ցուցանէր.
Խոտամունք իւր՝ որպէս էր ինքն յայնժամ՝ էին մեծամեծք,
Այլ կատարումն այնց ոչ ինչ, որպէս և է՝ նա այժմիկ,
Չառածեալ ինքն 'ի չար, չարեաց օրինակ տայր և կղերին:

Գռիփիթ

Նազելի բամբիշն, յանցանք մարդկան 'ի պղնձըս գըծին,
Ուղղութիւնք նոցին 'ի ջուրս: Թոյլ տուր և ինձ թէ հաճիս,
Զի դարեմայն որ 'ի նմա՝ սուղ ինչ այժմիկ ասացից:

Կատարինէ

Այս, աղնիւ Գռիփիթ, զի մի և ես գըտայց անիրաւ:

Գռիփիթ

Կարգինալս այս, թէպէտ ծնընդեամբ վատազգի դք անտոհմիկ,
Սահմանեալ էր 'ի փայլել յառաջամասն 'ի պատիւս:
Ի խանձարրոց իսկ մրտավարժ՝ հասունացեալ կանխադոյն,
Բազմիմաստ, ճարտարախօս, համոզակեր 'ի բանս իւր.
Գընայր ընդ ոչ սիրողս իւր խրոխտաբար ահարկու,
Այլ ընդ այնքս որ զիւրեւն դային՝ քաղցր իբր ամառն:
Թէպէտ և 'ի մեծութիւնս, (կարեւոր մեղք), ընչաքաղց,
Այլ 'ի տուրքս իւր, տիկին, արքայակերպ առատ էր:
Սննախանձ վրկաք կացցեն առատատուր պարգեաց՝
Երկզբին իւր դաստակերտք և գիտութեանցըն տաճարք
Իպսվիչ և յըբսվրբի. յորոց՝ ընդ իւր անկաւ մին,
Դըժկամակ 'ի յոտին կալ յետ քարեբար հիմնադրին:

Միւսըն թէպէտ չե յանգ ելեալ, այլ և արդէն հոյակապ ,
Գերազանցեալ արուեստիւք և զարգացեալ օր քան զօր
Յիշեցուցէ քրիստոնէից յամայր զնորայն երախտիս : —
Յերանութիւն եղև նըմին անձին իւրոյ կործանումն ,
Ձի յայնժամ , յայնժամ ևեթ միայն անձին նա ըզգաց ,
Էւ դիտաց թէ քանի քաղցր է համարել ընդ փոքունս .
Էւ յաւելուած մեծաշուք ալևորեալ հասակին
Ձոր մարդիկ տալ ոչ բաւէին , նա յերկիւղ Տեսառն մեռաւ :

Կատարինէ

Յետ մահուան իմոյ ոչ այլ ումեք ըզձամ քարոզի .
Ոչ ումեք այլ պատմողի գործոցս իմոց կենդանեաց ,
Առ 'ի սուրբ ունել զպատիւս իմ յամենայն խրճրըծից ,
Բայց հանգոյն Գոթիփիթայ հաւատարիմ պատմագրի :
Ձոր 'ի կեանսն ատեցի ես , դու ինձ ետուր՝ յետ մահուն
Մեծարել քոյով ցածուն անկեղծաւոր կըրօնիւք :
Խաղաղութիւն միշտ ընդ նրմա : — Այլ դու հուպ կաց , Համբերիկ .
Խոնարհագոյն երս զիր զիս . խուն մի ևս քեզ ծանրացայց : —
Ով բարի Գոթիփիթ , ասա երաժշտաց հարկանել
Ձերգըն սըզոյ՝ զոր ես ինձ երգ դամբանական կոչեցի ,
Մինչ զերկնաւոր նըւագան ածից ըզմըտաւ՝ յոր զընամս արդ ,
(Նոշագերգութիւն տխրագգաճ և շուրջ) :

Գոթիփիթ

Նընջեաց նա , Ազնիւ աղջիկ , նըստցուք աստէն անմրոռնչ ,
Մի զարթուցուք արգեօք ըզնա : — Լռեսցուք , ազնիւ Համբերիկ :

(Տեսիլն : Մասնեն սիգաբայլ մի զմիոյ կնի վեց անձինք սպիտակազգեացք ,
սարգենի պըսակ 'ի զլուխս , և ոսկեղէն դիմակ զերեսօք , ռոտս գափնեաց և ար-
մաւենեաց 'ի ձեռս իւրեանց կրելով : Նախ խոնարհին առ Կատարինէ , ապա
պարեն . մերձ ընդ մերձ առաջին երկուքն կախեն պսակ մի զգլխով նորա , մինչ-
դեռ այլք չորեքին մատուցանեն խորին երկրպագութիւնս , ապա երկու առա-
ջինքն՝ որք զպսակն ունէին՝ տան զայն այլոյն երկուց որ յետոյ դան , որք և
կրկնեն զնոյն հանդէս . զնոյն առնեն ապա և վերջին երկուքն . և յայնժամ (իբրև
յաղգեցութենէ իմեքէ) նա 'ի քունն ցոյցս առնէ ուրախութեան , և զձեռսն
յերկինս կարկառէ : Անձինքն կաքաւելով աներեղթ լինին , տարեալ ընդ իւր-
եանս զպսակն : Երաժշտութիւնն տեսէ) :

Կատարինէ

Խաղաղութեան հոգիք , հւր իցէք . անհետ Գեղք բնաւ ,
Էւ լըքեալ թողէք զիս ասա 'ի հիքութիւնս ընկըզմեալ :

Գռիփիք

Աւասիկ եմք, տիկին :

Կատարինէ

Ոչ այնք էք զոր արդ եսըս կոչեմ :
Ո՛չ տեսէք մինչ նիրհէիս՝ այսոր զոմանըս մըտեալ :

Գռիփիք

Ոչ զոք, տիկին :

Կատարինէ

Ո՛չ . և զիւրդ ոչ տեսէք դեռ նոր ահա
Երջանիկ գունդ մի հողւոց՝ որ զիս կոչէր 'ի խընջոյս ,
Որոց պայծառ դէմք բիւր շողս յիս արեւափայլս սըփռէին :
Նոքա ինձ զերանութիւն խոփտանային մըշտընջեան ,
Եւ պըսակս ինձ բերէին , որոց , Գռիփիթ , իմանամ
Ձի չեմ դեռ ևս արժանի , այլ ակն ունիմ զի եղէց :

Գռիփիք

Խընդամ , տիկին , յոյժ , զի երազս երազես այդպէս բարիս :

Կատարինէ

Դադարեցո զնըւազածուս , այժմիկ տաղտուկ ինձ բերեն :

Համբերիկ

Նըկատեա , որպիսի յանկարծ 'ի դըշխոյն փոփոխումն .
Ձիւրդ դէմքըն երկայնին , և չըրջի գոյն երեսացն ,
Որպիսի ցուրտ ընդ մարմինն ընթանայ . Յաշտն հայեաց :

Գռիփիք

Թողու նա զմեզ , ով աղջիկ . ըստէպ ըստէպ տըօթեա :

Համբերիկ

Ըսփոփեալիք ըզնա երկինք :

Մտանէ Բանքեր ոք

Բանքերն

Եթէ տիկինդ հաճեսցի...

Կատարինէ

Չիտորդ լիրբ ես . և աւելի ինչ պատուոյ չեմք արժանի :

Գռիփիք

Գիտեմ լով՝ զի նա զհին փառսն չըկամի մերկանալ ,
Յանցաւոր գտանիս այսպէս բըրտաբար լեալ յանդիման :
Աղէ , զիր ծունր :

Բանքերն

Հայցեմ , տիկին , խոնարհաբար թողութիւն .

Չիս ճեպ փութոյս արար անշնորհ : Ոստանիկ որ արտաքոյ
Յարքայէ առաքեալ կայ , և ասել ինչ ունի քեզ :

Կատարինէ

Գռիփիթ , թող մըտցէ նա . այլ ըզոս մի այլ տեսից :
(Ելանեն Գռիփիք և Բանքերն , ապա վերստին մտան Գռիփիք ընդ
Կապուկի) :

Եթէ ոչ պատրեն զիս աչք իմ՝ դու հրեշտակն ես կայսեր
Վաջանուն եղբոր որդւոյս , և անուն քո է Կապուկ :

Կապուկ

Արդարեւ նոյն , բամբիշն , և քո ծառայ :

Կատարինէ

Ո՛հ , տէր , ժամանակք

Եւ պայմանք՝ յոյժ փոխեցին զիս յօրէ յօրմէ տեսեր զիս :
Այլ արդ զի խընդրես յինէն :

Կապուկ

Աղնւական տիկին իմ ,

Գամ յառաջ քան զամենայն ըսպաս ունել քեզ բամբիշանդ ,
Եւ ապա 'ի հրամանէ արքայի այց առնել քեզ .
Նա թախծեալ վարանի յոյժ ընդ ցաւազին խօթութիւնդ :
Եւ 'ի ձեռն իմ զանվրէպ հոգոցն իւր քեզ ըզխնամա աւանդէ ,
Ոգուով չափ հայցելով զի խրախուսեալ զօրասցիս :

Կատարինէ

Բարերար տէր , տարածամ է ինձ խրախոյս քաջալեր .
Նըման իմն է դա չընորհի յետ կատարմանը վըճույն :
Դեղդ այդ օգտամատոյց՝ 'ի գէպ ժամու՝ բուժէր զիս .
Այլ յայսմհետէ ինձ վայրապար են ամենայն ըսփոփանք ,
ՊԵՐՈՒ Բ .

Աղօթք միայն օգնեսցեն ինձ : Եւ Տէր արքայ զիանդ կայ :

Կապուկ

Քաջառողջ է նա , տիկին :

Կատարինէ

Եւ եղիցի հանապազ :

Փրթթեսցի նա ծաղկազարդ մինչ բնակեցայց ես 'նդ որդունս ,
Եւ անուն իմ վատարազդ 'ի պետութեանս ջրնջեսցի : —
Համբերիկ , յընցեր ըղթուղթն զոր յանձնեցի քեզ զըրեւ :

Համբերիկ

Ոչ , տիկին : (Տոռնայ նմա գայն) :

Կատարինէ

Աղաչեմ , տէր , տուր ըղթուղթս այս առ արքայ :

Կապուկ

Տաց զայն , տիկին :

Կատարինէ

Թորում յանձնեմ ազնւութեան իսկ նորին
Զողջախոհ սիրոյ մերոյ պըտուղ ըզդուստր իւր մատաղ ,
Թորոյ վերայ իջեն յերկնից ցօղք յորդարուղիս օրհնութեանց :
Ի հրահանգս առաքինիս վարժել ըզնա աղերսեմ ,
(Դեռահաս է նա տիովք , և 'ի բարուցն իւր 'ի բոյս
Նազելի և պարկեշտ , ալն ունիմ զի քաջ յաջողի) .
Եւ սակաւ մի զնա սիրել յիշատակաւ մօր իւրոյ՝
Որ թէ քանի սիրեաց ըզնա , գիտեն քաջ երկինք :
Նա և այս եւրս խընդիր է իմ խոնարհ՝ առ արքայն ,
Ձի անկցի դուժ նորա 'ի թըշուառ յիմ աղախնայս ,
Հաւատարիմ փորձանակիցս իմ յերկոսին ևս 'ի բաղդ :
Թորոյ չիք ոք (ասեմ իսկ զայս այժմ յորում չէ մարթ սըտեւ) ,
Որ իւրով ամբիժ վարուք և լաւութեամբն սըրտի ,
Եւ ամօթխած մաքուր բարուք չիցէ արժան կենակցել
Ընդ ըզդօն և քաջի առն , թէ և իցէ մեծազգի .
Եւ անշուշտ որ զնոսին կին ածցեն՝ լիցին բարեբաստք :
Հուսկ յետոյ յանձն տունեմ գիմ ըսպասուարու... աղքատք են ,
Այլ յինէն աղքատութիւն ըզնոսին ոչ հեռացոյց...
Վասն որոյ հատուցի նոցա վարձուցըն տրիաուր ,

Եւ ինչ մի ևս աւելի, առ հանապազ զիս յիշել:
Եթէ երկինք երկայն աւուրս ինձ տակաւին չնորհէին
Եւ բարութիւնս յողովագանձ, այսպէս մեկնել չէր արժան:
Ահա այս ինչ է 'ի թըղթին: — Եւ դու իշխան պատուական,
Երդմնեցուցեալ ըզբեզ 'ի սէր գեր սիրելոյ քում յերկրի,
Եւ 'ի հանգիստ նընջեցելոյ քրիստոնէից՝ զոր մաղթես,
Աղաչեմ խընամ տանել տառապելոցս այսոցիկ,
Եւ հայցել յարբայէ զյետին զայս շնորհ առնել ինձ:

Կապուկ

Ոն և օն արարից զայդ, ապա թէ ոչ՝ չիցեմ մարդ:

Կատարիմէ

Շնորհ ունիմ քեզ, ազնիւ տէր: Յիշեցես զիս առ արքայ
Ամենայն խոնարհութեամբ. և ասացես, զի որ ինչ
Ընդերկար վիշտ էր նըմա՝ արդ նա էանց յաշխարհէ:
Ասա նմա, զի 'ի ժամու մահուանս ըզնա օրհնեցի:
Այսպէս կամիմ առնել... Մըթնին աչք իմ... Ողջամբ մընա, տէր: —
Ողջամբ մընա, Գոթիթիթ: — Այլ դու, Համբերիկ, մի զիս թողուր:
Հարկ է երթալ ինձ 'ի մահիճս. կոչեա բազում աղախնայս: —
Եւ երբ մեռայց, ազնիւ աղիկ, մեծարեալիդ զիս չըքով:
Կուսականս զինն սըփռեա ծաղիկս, զի բնաւք ծանիցեն
Եթէ կին մի կացի ես մինչև ցըմահ զգաստասէր:
Պատեսլիք զիս զմըռօք և դիք հասարակաց 'ի տեսիլ:
Թէպէտ զըրկեալ 'ի դըշխոյի ոնուանէ, թո՛ղ թաղեցայց
Իբրև զըշխոյ, դուստր արքայի: Այլ զօրութիւն իմ սպառի...

(Ելանեն տանելով զկատարիմէ):

Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱՐԷՍ ՂԱՐԱՆՏԻՆ

